

- Ե. Հաւաքել գիտակցող անդամներ 15 տարես
կանից բարձր և շաբաթը մի անգամ ժողով
ունենալ, ուղղովորդի կրթութեան համար
մտածեու:
- Զ. Միութեան նիւթականն ապահովելու ամե-
նազլիաւոր միջոցն է նողագործութիւնը,
ուստի պէտք է սեփական գետին ունենալ:
- Է. Ընտրել մի յանձնախումբ, որի պարտակա-
նութիւնը պիտի լինի զբաղել թատրոնական
խնդրով: Տարին 1-2 անգամ, մեռն մամա-
նակ, ներկայացնութեր տալ միջավայրի հա-
մապատասխան Ներկայացնան հասոյթը
յատկացնել զրադարանի օգտին:
- Ը. Աշխատել միջոց տալ ժողովորդի միջի վճենքի,
այլ և հակառակ կուսակցութիւնները միա-
ցնել և տալ հաւասար ուղղութիւն:
- Թ. Աշխատել ժողովորդի մէջ զրագէտների թիւը
շատացնել, տալով նրանց հայրենասիրա-
կան և ազգասիրական ուղղութիւն:
- Ժ. Աշխատել ժողովորդի միջից վերացնել տիրող
նախապաշտութերը, բերել տալով նրանց
դէմ պայքարող գրքեր:

Ընկերութիւնն ունի մի փոքրիկ գրադարան,
ուր կայ մօտաւորապէս 100 հատոր հայերէն
գրքեր: Ընկեր. անդամները շաբաթը մի անգամ
տալիս են գասախոսութիւններ:

Գիւղն ունի երկու քեադիուզա, Պ. Պ. Գաս-
պար Ասուածատրան և Սիմեոն Մանասէրեան:
Մրանցից առաջնինը հիմ հայեացներով ու զա-
ղափարներով տոգորաւած տանստուք է և ունի 15
հազար թումանի կարողութիւն, որ ձեռք է բերել
հարստահարութեամբ, փացնելով գիւղացիները
մէկին կամ միւսին: Այժմ զիւղացիները պար-
տական են նրան 5-600 թուման փող և 600
լիտր ցորեն: Ծնորհի իր հարստութեան՝ գիւ-
ղում նա որոշ հեղինակութիւն է ձեռք բերել:
Երկորդ քեադիուզան աղքատ, բայց գիւղակից
մի անձնաւորութիւն է, որ սակայն իր աղքա-
տութեան պատճառով չի կարողանում որոշ գեր
կատարել գիւղացիների ցաւոս կեանքում:

Գիւղն ունի երեք կրպակ և երկու ջրազաց:
Գիւղի հիմսային կողմը, 500 ֆայլ ենուա-
ւորութեան վրայ գիւղ գումար է գերեմանատունը,
որտեղ թաղած է պարտկանայ յայտնի աշուշ
Ալլահի բդիկին¹, որի հողակոյտի վրայ գրւած
է անտաշ և անպանոյն մի քար, առանց արձա-

նազրութեան: Իսկ գիւղի հարաւ - արեւմտեան
կողմը, քառորդ քարսախ հնաւորութեան վրայ
ընկած է խանի դալէն: Դա երրուպական ճաշակով
կահաւորւած աղիւսաչին մի շինութիւն է, որ
կառուցած է գիւղացիների արիւն - քրտիկով:
Ղալէից մինչև գիւղը զարդարւած է ծառուղիով:

Այս գիւղը նոյնպէս ենթակայ է թափառա-
շրջին զաշնէի օօրքերի ասպատակութիւններին,
որուն իրենց զիւնած խմբորով լեռներից գիւղն
են իջնում և հանդից տանում զիւղացիների
ոչխարները կամ գիշերով մտնում են նրանց ար-
տերը և հունգը աւարի տալիս:

Վիճեննա

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

(Եարումակելի)

ՀԱՅ ԶԵՐԱԳԻՐ ՂՈՒՐԱՆ ՄԻ Ի ՀՆԴԻԿԱՅ

(Թբիլ. Առէկանոս Հարբարդութիւն Խւնցաւոյ)

(Եար. տես Բազմ. 1924, էջ 166)

Արդ ի վկայութենէ Առաքել վարդա-
պետի ի յայտ գայ, թէ եկն Ստեփանոս
իլովեցին ի վանս անդ սրբոյն Էջմիածնի
յաւուրը կաթուղիկոսութեան Փիլիպպոսի՝
որ ամբարձեալն էր ի զան հայրապե-
տական յերեցաւաներորդ աւուրն Յու-
նուարի յամին 1633: Փիլիպպոս կաթու-
ղիկոս էր նոյնպէս որ ձեռնազրեալ զնա
«Ես եմա զիշիւսուրին վարդապետական»
ըստ բանից Դաւրիթեցւոյն: Եւ ի բանից
Առաքելի իմանամբ թէ յետ ձեռնազրու-
թեանն, Ստեփանոսն վարդապետ փայլե-
ցաւ յասպարիզին Հայ զրագիտութեան և
արկեալ զիւրեաւ զմաշկեակն ամեներան
թարգմանչաց մերոց սկսաւ ճոխացուցա-
նել զայ լեզուն. ուրեմն յոյժ հաւանա-
կան թուի թէ թարգմանեցաւ և Դօրանս
այս առ կենդանութեամբ կաթուղիկոսին՝ և
յառաջ քամ 1650, յորժամ հան-
գեաւ ի Տէր Փիլիպպոս կաթուղիկոսու Ու-
րբեմ ըստ ամենայն հաւանականութեան
թարգմանութիւնս այս կատարեցաւ յամին
1650՝ կամ փոքր իմ յառաջ կամ յետ
կիսոյն 17րդ դարուն:

1. Տէ՛ս մեր յօւնածը Արքենայի «Համբես Ամսո-
րացչը էլ, 1924 թիւ 5-6, Մայիս-Յունիս, Ա. Ե.

Սկսանի լլտեփաննոս վարդապետ ըզ-թարգմանութիւն Ղօրանին այսպէս:

«Այս է զիրք օրիմաց հազարացոց կամ իսմայլացոց որ կոչի Ղորան, այսիմբ հաւաքում պատուիրամաց»:

Աղօ[թ?] արա որ և զրուխ առային

« Ողորմածի և բարերարի Աստուծոյ « բնափց ըստեղծողի որում սպասէ օրն « վերջին: Ախատի մարդանաց իոնարա « հեսցուք երկիրպազանել նմա, զենոնկա « լութիւն և զպարգևն շաւզաց և զա « ւանդն որ զմեզ մոերիմս, և ոչ երբէք « թշնամիս և ոչ մոլորեալս առ ինքն « ձգեաց, միշտ անդադար ի միտ առցուր:

Այլ բարգմանուրին:

« Յանուն Աստուծոյ ողորմածի զթածի, « գոհութիւն Աստուծոյ Տեառն բնափց, « ողորմածի զթածի, դատաւորի աւուրն « դատաստանի: Զքեզ աղաչեմք, ի ցեզ « յուսամբ. Առարեա զմեզ ի ճանապարհ « ուղիղ, ի ճանապարհ այնոցիկ զորս « ընտրեցեր, և ոչ այնոցիկ որոց վերայ « բարկացեալ ես և ոչ անհաւատից:

Այլ բարգմանիլ:

« Յանուն Աստուծոյ ողորմածի բարե- « բարի աստուծութեան Աստուծոյ թաւ « գաւորի յաւտիւնից ողորմածի և բաւ « բերարի թագաւորի յաւուրն դատաս- « տանի: Ո՛վ զորք ամենեցեան ծառայես « ցուց նմա ստուգիւ օգնեալ եղիցուք: « Տէր ուղղեալ զմեզ ի կէտ ուղիղ, ի կէտ « այնոցիկ ընդ որս հանեցար առանց « բարկութեան ընդդէմ նոցա, և ոչ մո- « լորեցուք»:

Ձեռագիրն է $8\frac{1}{2}$, \times 6 մատնաշափ՝ և ունի 594 էջս, մի մասն բոլորազիր և միւս մասն նոտրազիր զըշութեամբ, սեւալ մելանաւ և կարմիր զիխազրովք ի վերայ յդկեալ թղթոյ:

Թարգմանիչ մեր բանիրուն ունի բա- զում լուսանցազութիւնս յընթացս իւրոյ զեղեցիկ թարգմանութեան, յորոց ցանի մի կտորս աւելորդ չհամարիմ զնել աստանոր ի ծանօթութիւն ընթեցողաց իմոց:

յէջ 355. Վասն կուսին Մարիամու կամի ասել բայց ամբարշտարար:

յէջ 342. Ասէ թէ ըրիստոնիայըն փո- խեցին զաւետարանն որ է սուտ:

յէջ 361. Նման զնման սիրէ:

յէջ 375. Աստուծած ոչ բռնութեամբ ածէ ի հաւատ:

յէջ 383. Վասն ուղտու առասպել ասէ:

յէջ 385. Զինքն զովէ որ չէ ընդու- նելի:

յէջ 397. Փոխանակ զատեր փարաւոնի կին զնէ որ է սուտ:

յէջ 401. Զաստուծած մէկ ասէ և բազ- մաւորակի խօսի և զինքն զործակից Աս- տուծոյ զնէ, տես զանմուռութիւնն:

յէջ 418. Ասէ թէ աշակերտաց Ղու- րանի ոչ է պարտ լինել խօսակից ան- հաւատից:

յէջ 421. Բանք ով վկայեն վասն ըռ, եթէ ճշմարիս են դու մի զովեր զեկզ:

յէջ 425. Տես զներծուածն որ ասէ զնոգի մարզոյ ի հոգոյն Աստուծոյ զնէ:

յէջ 431. Զոր ոչ կամիս լինել քեզ այլում մի առներ, ապա զու Մահմէտ վասն էր այլոց կանանց ցանկաս:

յէջ 431. Զկնի այսքան ջանի վասն այժմ կանանց զովէ զողջախոհութիւն ծած- կելով զիւր վավաշուութիւն որ ժֆ կա- նայս ունէր:

յէջ 432. Մահմէտ վերջին մարզարէ զնէ զինքն:

յէջ 432. Զինքն զովէ և մարզարէ ասէ:

յէջ 433. Ո՛վ անաստուած օրինաց և զարշելի վաւաշուութեան զիւրդ հա- կառակ ասէ ամենայն մարզարէից և զլս- տուած կամակից զնէ իւր չար ախտիցն կացուցանէ:

յէջ 433. Տես զօրէնս արձակելոյ զկա-

նայս որբ ոչ Մովսիսի և ոչ մարդկային
քնութեան համաձայնին:

յլջ 434. Տես զգործ մարգարէին այլոց
կանայք ինքն առնու և իր կանանցն ոչ
թողու մարդ տեսանել:

յլջ 441. Ջինքն կոչէ պատզամաւոր
ճշմարտութեան և ի ճշմարտութենէ հեռի է:

յլջ 445. Ջղուրանն կոչէ ժառանգու-
թին բարի մարդկան:

յլջ 447. Միհայն զինքն և զղուրանն
զովէ տես եթէ ոք ի մարգարէից այսպէս
արար:

յլջ 451. Տես զի սուտ ասէ քանզի
զղուրան ոտանաւոր զրեաց:

յլջ 457. Ոչ ամրարշտութիւն, զծնունդ
Աստուծոյ մարմաւոր իմանայ:

յլջ 462. Մարդ մարմաւոր և մար-
մասէր զմարմոյ խորհի և մարմաւոր
հէջուութեանց ցանկայ որպէս Մահմէտ և
իրեն, աւագ կուրութեան մտաց:

յլջ 462. Ոչ ինչ ունի հաստատ այլ
որ ինչ ի միտո եկն զրեաց:

յլջ 462. Անմիտն զանմուռութիւն խօսի
զի արդ բազում անզամ զնոյն ասէ:

յլջ 470. Բազում անզամ ասաց թէ
Աստուծ միայն դատէ, իսկ այժմ զնրեշ-
տակս զատաւոր կոչէ:

յլջ 471. Ի զուրանին երգնու որ յԱս-
տուծոյ տուեալ է նմա:

յլջ 485. Տես զանհաստատ միտո և
զրանս սորա զի ոչ ինչ ըստ կարզի խօսի:

յլջ 494. Զորդին Աստուծոյ ուրանայ:

յլջ 499. Ասէ թէ Ղուրանն Աստուծոյ
ձեռամբ զրեալ է:

յլջ 501. Երդնու թէ ինքն ոչ արար
զղուրանն.

յլջ 501. Եթէ ոչ զիւնս զինչ պիտոյ
է առնել քեզ, ապա ինչպէս մարգարէ
եմ:

յլջ 503. Դեռն ի ձեռն Ղուրանին դար-
ձան, ցան զայս զինչ աւելի սուտ:

յլջ 504. Վարձն զինուորութեան ըզ-
դրախտն տայ:

յլջ 505. Զզինքն և զմեղըն յիշէ ի
մէջ զրախտին և կաթն այլ տես որ զինին
հալալ է ասէ Մահմէտն:

յլջ 518. Տես թէ յինչ իրս երգնու
որբ են երազ տղայոց:

յլջ 519. Այսպիսի գրախտն վաւաշո-
տաց և մարմասիրաց է փափազելի:

յլջ 520. Երգնու թէ յերկինս յափշ-
տակցաւ և անդ ուսաւ զիորհուրդս զայ-
սոսիկ: Տես զատութիւնն:

յլջ 527. Տակաւին ի դրախտին պոր-
տոյ և ցանկութեան ծառայեսցեն, կորիցէ
այսպիսի երանութիւնն:

յլջ 528. Ալմնայն ինչ սուտ և ներհակ
Աստուծածային զրոց:

յլջ 434. Զայս ընդէր մահմետականքն
ոչ պահեն եթէ Ղուրանին հաւատան:

յլջ 540. Ոչ է պարտ ընդունել զօ-
տարս յուսմանէն Մահմէտի, զի մի զիտաս-
ցեն զիորհուրդս ազանդոյն:

յլջ 543. Քրիստոն զուշակեաց թէ
Մահմէտն զալոց է, արդարէ ասաց թէ ե-
կեցեն սուտ մարգարէց:

յլջ 545. Զհրէայս նմանեցուցանէ
գրակիր իշոյ:

յլջ 549. Վասն արձակելոյ զկանայս
և զու տես զիգամոլութիւնն Մահմէտի:

յլջ 559. Եթէ օր Տեսան հեռի է ՆՌի
ամօց, ապա ընդէր բազում անզամ ասէ
ի մոտոյ զալոց:

յլջ 560. Տես զրդշախոնութիւնն Մահ-
մէտի ոչ զինչ ասէ:

յլջ 563. Տես զատութիւնն իրը թէ
յառաջ սովոր էր ելանել յերկինս՝ յետոյ
նմա փակցաւ:

յլջ 570. Տես զինին որ Աստուծ ի
դրախտին տայ զիարդ ասեն մահմետա-
կանքն թէ զզինին հարամ է արարէր
Մահմէտն:

յլջ 593. Ոչ զաղարի ուրանալոյ զոր-
դին Աստուծոյ:

Աւազ անդառնալի և յաւէտ անփոխա-
րինելի կորստեան և ո՛վ զիտէ թէ ո՛րբան
այսպիսի հազուազիւտ ձեռազիրը կորեան
ի հնդիկս և անկան ի ձեռս օտարաց և
անարժանից յերեսաց ողբալի անտարբե-
րութիւն արդի Հնդկանայոց, անարժան
յաջորդացն ասեմ Շամիրեանի, Շմաւո-

Նեանի, Ավագակեանի, Թաղեաղեանի և Գաւլցեանի:

Յակոր Շահան Ջրպետեան գրէրն երբեմ ի գերանուակ Փարէզ ցաղաքէ առ Սէթ Ասմ ի Մադրաս Հնդկաց՝ խնդրելով ի նմանէ տալ ինքեան ծանօթութիւնս զազգէ և գհայրեննաց զի յայնժամ Մադրաս և կալկաթա կեդրոնը էին Հայ զրագիտութեան ազգային գվորցօք, տպարանօք և լրագրօք, իսկ զարդիս չկայ և Հայ լրագիր մի կամ տպագրատուն իսկ ի համօրէն Հնդկաստան, ուր ծնաւն Հայ լրագրութիւն յամին 1794: Լեալ են ի Մադրաս երբեմ տպագրատունը Շամրեանի, Շմաւոնեանի և Ազատէլեանի, և ի կալկաթա գտանէին Հայ տպարանը Տէր Յովսեփայ, Աւտո Ֆնթլումի, Մարդասիրական Ճեմարանի, եպիսկոպոսական Ճեմարանի, Մշրտչ Միհինարաց, Արարատեան ընկերութեան, Պոլոսի Վէջինեան կոստանդնուպոլսկեցոյ և Խաղկեան Աւագ Քահանայի, իսկ այսօր չնշմարին և հետք նոցին անզամի: Զինչ այլ բեզ յոյս Հայութեան ի Հնդկաս ովկ Հայ ազգասէր, զի կրեաւ այն ի վիճ օտարամոլութեան յորմէ հետէ մոռացաւ զիւր լիզու մայլենի և սկաւ թահաղու երկիր պազանել: — Ափսոս:

ՄԵՄՐՈՎՅ Յ. ԱՅԹԵԱՆՑ

ԹԱՐԱՐԱՆԵՐՈՒՆ ՄԷԶԷ ՈՐԴԵՐԸ ՃՆՁԵԱԼԻ

ՄԻԶՈՑՆԵՐ

○

Պէտք է գգալիկ մը մանանեխի (սենար) աւլուր լցնել ամէն 5 միզր ջուրի մէջ, և լուծուելէ վերջն ոռոգել անով թաղարմները: Ոչ մէկ կերպով բոյսերը չեն փասուէր անէ:

Նոյն նպատակին կրնայ օգտակար ըլլալ՝ միրենով ծխախոտի տերեւ ջուրի մէջ, քիչ մալ մուր աւելցնելով: Պէտք է այս բաղադրութիւնը սրսկել վտանգուած բոյսին վրայ, իսկ արմատներն ոռոգել:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՐԱԳԻՐՔ

Ա. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

ԺԴ.

ՀԵՔԻՄԱՐԱՆ ՍԻՄԵՈՆ ԿԱՄԱՐԿԱՊՑԻՆԻ

(Շար. տես Բազմավէպ, 1924 էջ 169)

*

Քանի մը փոքրիկ պրակներ ալ կը յատկացնէ վասն եշանաց Հիւանդաց վերնագրով, և ասոնց մէջ կը գրէ լաւանալու հակամէտ հիւանդին կամ մեռնելու մօտ եղողին ներկայացուցած նշանները ու կըսէ:

« Յորժամ առ հիւանդն մտանեն, զաչ « ձեսն բանէ, և տես զմանս երակն, այ- « սիերն զնացին, բէ տեսանեն որդիւ փող « և մի սե ի ձակատն, ես մանու ի հիւանդն»:

« Թէ չերմ ցատ շինի և դոյնե սպիտակ « որդիւ ասողը մարդոյ ես բարի հշան և. « Թէ հիւանդն քան լինի և այքն ի բաց, « կամ բերանեն ես մանու և.

« Թէ հիւանդի զիխէնի ի վայր կեսն քրտեի, « և շուս ցամբի և քրտիմբի պատ լինի ես և մանու և.

« Ֆարճեազ առ զովն ի վերայ կանաչ « խոսուն հնամեց տոնք և վաշճ տես բէ իր « զունվին է խոսն ես կա զրի, և բէ դեղ- « ներ և մեսամի.

« Թէ քենուրինեն աշակողման վրայ քոն « լինիշն սիրէ աղեկ և.

« Թէ զովն հիւանդին պղոտր լինի և դե- « ղին՝ և կարմրագոյն հարկանէ, ես ցատ « յարենեն և.

« Ազա բէ բարինչի զունվ լինի որ ոչ « ձերմակ, և ոչ լիդին և ոչ կարմիր, զի- « տացիր որ բարի հշան և.

« Ազա բէ կարարային տակն զերդ սեւ « մազեր, և զերդ տուրտին (այսիերն բօր- « բու, և և մրուր) եստի՝ չէ աղեկ.